

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ

1.1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ

2010թ. հունվար-մայիսի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը: ՀՆԱ-ի արտադրության ծավալն ընթացիկ գներով, 2010թ. հունվար-մայիսին կազմել է 1016842.9 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2009թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 108.8%՝ 2009թ. հունվար-մայիսի 84.8% համապատասխան ցուցանիշի դիմաց:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2010թ. հունվար-մայիսին կազմել է 312730 դրամ (809 ԱՄՆ դոլար կամ 600 եվրո):

ՀՆԱ-ն՝ հաշվարկված արտադրական եղանակով (ըստ ԵՀՀ 95¹ Ա 3 և Ա 6 դասակարգումների)

(%)

Հղում S9S7-ին (NACE 1.1)		Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ	ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետով)		ՀՆԱ-ի կառուցվածքը			
Ա3	Ա6		Հունվար-մայիս					
			2009	2010	2009	2010	2009	2010
		Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	84.8	108.8	-15.2	8.8	100.0	100.0
		Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	76.0	120.3	-3.6	2.7	13.3	14.7
		Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	86.3	107.0	-11.6	6.1	86.7	85.3
		ՖՄԱԶՉ ²	99.7	124.0	0.0	-0.7	-2.9	-3.0
A+B	A+B	Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն	97.2	101.0	-0.3	0.1	9.1	9.0
C+D+ E+F		Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկա և շինարարություն	68.1	113.4	-11.6	3.5	25.6	27.8
	C+D+ E	Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան	89.6	109.2	-1.9	1.6	17.4	19.2
	F	Շինարարություն	46.4	122.5	-9.7	1.9	8.2	8.6
G-P		Գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում	100.6	105.9	0.3	3.2	54.9	51.5
	G+H+I	Առևտուր, ավտոմեքենաների, կեն- ցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում, հյուրանոցներ և ռես- տորաններ, տրանսպորտ և կապ	96.9	106.1	-0.7	1.6	26.1	24.5
	J+K	Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	101.8	113.1	0.2	1.6	12.1	12.0
	L-P	Այլ գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում	106.2	100.2	0.8	0.0	16.7	15.0

¹ Եվրոպական հաշիվների համակարգ

² Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ